

սպանի, ձայն ելաւ թէ մեռած ըլլայ, սակայն ստոդ չէր և լրագիրք սուտ հանեցին այն ձայնը:

Անցեալ տարի Զիարիանի, որ 'ի սկըզ բան սաստիկ նիհարցեր էր, նորէն առաջին առողջութիւնը ձեռք ձկեց, և սկսաւ թատերաբեմի վրայ հասարակաց առջև նոյն խաղը կրկնել, որ իրեն մահացու եղեր էր: Կ'ըսէր թէ խորաշափ դործիքով կոկորդին մէջ եղած փորձերը վարժեցոցեր էին զինքը օտար մարմններ ընդունել կոկորդէն վար: Այնպէս որ ժողովուրդը տեսնելով իրեն ծաղրածելն ունեցած թշրւառութեանը վրայ, սկրսան տարակուսիլ թէ չըլլայ որ խարիէութիւն ըլլայ այն պատաստքաղին պատ-

մութիւնը, անոր համար հարկադրուեցաւ գու գուրս հանել բժշկաց վկայական ները վերջէն ուրիշ տեղուանք ալ զնաց Զիարիանի նոյն խաղերն ընելու համար, իսկ հիմա միորենցա կը կենաց:

Տարիին է 25 կամ 26, հասակաւ բարձր, կազմուածքով առողջ ու դէմքով խելահաւ: Մինչեւ հիմա պատառքաղն հորիզնական դրբութ կեցեր է ստամոքսին մէջ, և ինքը կըսէ թէ երբ չափը չանցըներ ուտելու խմելու, և չիյոդնիր, քիչ ցաւ կը զդայ և ուշ ուշ: Անոր համար սովորութիւն ըրեր է կամաց կամաց քալել ձեռքով ստամոքսը բռնած, որպէս զի ցաւ չզգայ:

ՃԱՆՃ

Ճանճն ընդհանրապէս կը համարուի ձանձրացուցիչ միջատներէն մէկն, ուստի կէ անկարելի կ'ըլլայ մարդուս պաշտպանել ինքը զինքն ինչ ալ ընելու ըլլայ:

Երբ անոնք կ'աղտոտեն սենեկաց կահըը ու կարասիքը, ոսկեզօծ շրջանակները, երբ կ'ընկնին կաթին մէջ կամ ապարին մէջ, երբ արդեւք կ'ըւլան մեղի քուն ըլլալու իրենց շարունակ ազգալովը և հանգիստ չեն ժողովրա անդադար խայլթելավը, ձմեռը կը վենտուենք որ ապասէ զմեզ այս նեղացուցիչ թշնամիէն: և կը հարցունենք թէ ինչ բանի կը ծառայէ այս միջան որ այնչափ անհանգստութիւն կու տայ մեդի:

Այրդ ճանճն որ այշափ նեղութիւն կու տայ մեղի, ինչն ալ ունի, ինչպէս ամեն արարած որ կը չնչէ ու կ'ապրի երկիրս վրայ, պաշտօն մը կատարելու, և շատ կարեւոր պաշտօն: այնպէս որ պէտք է ներենթ իրեն մեղի շարունակ տուած նեղութեանց համար: Բւշագրութեամբ դիտանք ճանճ ճանճ մը, որ յետ թը:

չըտելու առ ժամանակ մը կու գայ կը հանգչի: կը տեսնենք որ խել մը չարձմունք կը կատարէ, կատուի նման կը լրդուըստըկի ու կը զարդարուի, կամ թւանոյ նման՝ որ փետուրները կը մաքրէ: Նախ ետևի թաթերը մէկմէկու հետ կը չփշիէ, ետքն անսնց իւրաքանչիւրն հետզհետէ մէկ թւին վրայէն կ'անցունէ: ետքը կարգը կու գայ առջի թաթերուն, զանոնք ալ իւրարու հետ կը չփշիէ: ամենէն ետքը կը տեսնենք որ պատիճովը կ'անցնի բոլոր շրջուած մասերուն վրայէն:

Արգեօք այս շարժումները լոկ մաքրութեան համար կը կատարէ: Մինչ է հիմա այնպէս կը կարծուէր, բայց անդ զիացի հուշակաւոր քիմիագէտ մը կ'մէրալն (Emerson) անունով մօտերս ապացուցուց որ շատ տարբեր է այս բանիս պատճառը: Մանրացուցի տակ դնելով ճանճ մը, տեսաւ որ վիճան տեսակ մը լուիկներով ծածկուած էր, և ամեն ճանճի վրա ալ նոյն երեւոյթն ստուգեց: Եսգէն դիտեց որ այս միջամտերը պատճնին իրենց մարմնոյն այն

մասանցը վրայէն կ'անցունէին, ուր այն լուիկները կը դանուէին, և թաթերուն այն այլեայլ շփումներն որ բախնք ուրիշ վախճան չունէին բայց եթէ մէկ կէտի մը վրայ հաւաքելու որչափ որ կարելի է շատ մը այն լուիկներէն, որպէս զի գիւրաս կարող ըլլան ուտելու զանոնք ամենիքը :

Առջի բերան իմէրսըն կարծեց թէ ճանճերն իրենց ձագերը կ'ուտեն. վասն զի ինչպէս որ յայտնի է իրենց մարմարն կամ կը տանին ձագերնին. Սակայն նորանոր ու շարունակ փորձերը լուսաւորեցին զինքը : Մանրացուցին տակ դրաւ կտոր մը սպիտակ թուղթ, որուն վրայ երկու ճանճ հանգեր էին, որոնք բան մը ուտելու սաստիկ զբաղած կը տեսնուէին. և տեսաւ թղթին վրայ այն լուիկները : Այն ատեն մէկդի առաւ թուղթը, և ժամանակէ մը ետենորէն մանրացուցի տակ դրաւ նոյն թղթի կտորը, և տեսաւ զարմանքով որ այն լուիկները ինքն իրենին արտաքոյ կարգի բազմացեր էին. Ուրեմն ճանճերը չէ թէ իրենց ձագերը կ'ուտեէին, այլ մանրացուցվ տեսնուած այն մանը կենազնիները, որ օգուն մէջ կը գտնուէին, և կը կպէէն իրենց թեելուն, թաթերուն և մարմարն : Մէկ մը որ ճանճերը ճանրանան ըստ բաւականի այն կենդանի պաշարով, հանդիսաւ անկիւն

մը կը քաշուին և ուտելու կը զբաղին: Յետոյ իմէրսըն ստուգեց որ ուր օդն ապականած էր, ճանճերը գլուխներնէն մինչեւ ստուլնին ծածկուած կ'ըլլային այն լուիկներով . իսկ ուր օդը մաքուր էր ու հովահար, ճանճերը վատոյժ և վրանին զրեթէ լուիկ մը չէր ըլլար: Այս կերպով անդղիայի հոչակաւոր քիմիագէտը կ'ապացուցընէ որ ճանճերն ալ օգտակար պաշտօն մ'ունին կտարեկուու իւր նշանաւոր քննութիւններով այս երնելի քիմիագէտը յայտնեց նոր օղակ մըն ալ եղծման այն հարկաւոր շղթային որ կենսունակ բնութեան մէջ կայ: Այս անտեսանելի անասներները ճանճերուն կերպուր ըլլալու համար են, ինչպէս ճանճերն ալ մամուկներուն, և այսպէս հետզհետէ: Այս կենսունակ անասնիկները իրենք ալ իրենց պէտքն ունին, իրենք ալ կը մանին, գուցէ իրենք ալ նոյն պաշտօնը կը կտարեն նկատմամբ ուրիշ անտեսանելի անասնիկներու վրայ, ինչպէս ճանճերն իրենց վրայ կը կատարեն. — սակայն գործեաց անկատարութիւնը թոյլ չի տար այս բանս տեսնելու: Բայց ստոյգ է որ այս անասնիկներն ալ պիտի ունենան իրենց օգտակարութիւնն արարշութեան կարգին մէջ, վան զի Արարշապետն բնութեան բան մը ստեղծած չէ առանց նպատակի:

ՈՍՏՈՅՆՍ.ԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈ.ՆԳՂԻՄ.

Անդղիոյ սատայնադործութեան վերակեցուք մէծ խնամքով տեղեկագիր մը պատրաստեր են, որուն մէջ կը ճըշդեն իրենց երկրին թէ սատայնանկութեան գործարանները և թէ անոնց մէջ սատայնանկող գործեաց թիւը: Այս տեղեկագիրը կը ցուցընէ նաև այն գործարանայ ըրած շարունակ յառաջազմին թիւնները և միանգամայն անոնց արտադրող կարողութեան անդադար

աճումը՝ մէքենայից օգնութեամբը և մէքենական գործեաց կիրառութեամբը, որոնք կը փոխանակեն ձեռնական աշխատութեան, որ բաւական ըլլար պէտքը լցունելու:

Քամպակի գործարանաց թիւն որ յամին 1850 էր 1682, յամին 1861 էր 2887, և յամին 1874 էր 2483. իսկ յամին 1875 էր 2665: — Բրդի գործարանաց թիւն որ յամին 1850 էր 1497,